



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մայիսի 2024թ. թիվ 280-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 21-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հաշվի առնելով կադրային փոփոխությունները՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2022թ. հունվարի 12-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողով ստեղծելու և ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ 31-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 21-Ա որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

27/05/2024

X

ԱՐԱՄ ԴԱԶԱՐՅԱՆ

Ա. ԴԱԶԱՐՅԱՆ

2024թ. մայիսի 27  
ք. Վանաձոր

Հավելված.  
ՀՀ Լոռու մարզպետի  
2024թ. մայիսի 27-ի  
թիվ 280-Ա որոշման

«Հավելված 1.  
ՀՀ Լոռու մարզպետի  
2022թ. հունվարի 12-ի  
թիվ 21-Ա որոշման

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

- Գ.Ասրյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ  
Ս.Գաբրիելյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ՆԳՆ փրկարար  
ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության  
պետ, փ/ծ գնդապետ

Հանձնաժողովի անդամներ.

- Ռ.Մարգարյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության  
և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ  
Մ.Խեչումյան - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և  
տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ  
Մ.Դավթյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ  
Ռ.Պողոսյան - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական  
ոլորտի հարցերի վարչության պետ  
Ա.Թումանյան - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա  
միջավայրի պահպանության վարչության պետ»

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

27/05/2024

X 

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ